Հ Ս Խ Հ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԽՈՇՈՐ ՅԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՋՈՒԳՎՈՐՄԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

636
Հ-25

ԳՈՍՈՒՀՐԱՏ – ԵՐԵՎԱՆ 1935

09 SEP. 2013

636
2-25
ԱԿ.

30 JUL 2010

Հաստատված է ԽՍՀՄ Հողագործության ժողկոմի տեղեկագրի Ֆ. Ա. ՑԻԼԻՆՍԿԻ կողմից՝ 13/2-1935 թ.

Զուգավորման կամպանիան անասնապահության մեջ նույն նշանակությունն ունի, ինչ վոր գարնանացանի կամպանիան՝ հացահատիկային տնտեսության մեջ։ Զուգավորման ճիշտ կազմակերպումից և լավ ու հաջող անցկացումից է կախված սոցիալիստական անասնապահության զարգացումը և լավացումը։

Այնինչ զուգավորման աշխատանքների կազմակերպմանը մինչև այժմ պատշաճ ուշադրություն չի դարձվում։ Զուգավորումն «ինքնահոսով է անցնում։ Անասունների խնամքի գործում դիմազրկություն է տիրում։ Մայրերի խնամքը և կերակրումը, ինչպես նաև արտադրողների ոգտագործումը չափազանց վատ է կազմակերպված։ Հետևանքն այն է, վոր մեծ քանակությամբ ստերջ կովեր են մնում։

Այսպիսի դրությունն այլևս անհանդուրժելի է։ Յուրաքանչյուր կոլտնտեսության, կոլտնտեսականի և մենատնտեսի հիմնական խնդիրն է՝ լուծարքի յենթարկել ստերջությունը և ցուլով ծածկել զուգավորման յենթակա բոլոր անասուններին։

1. ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Անասունների զուգավորումը պետք է խիստ պլանավորված կարգով կատարվի։ Յուրաքանչյուր կոլտնտեսություն, յուրաքանչյուր գյուղխորհուրդ շրջհողբաժնի կողմից հաստատված խոշոր յեղջյուրավոր անասունների զուգավորման տարեկան պլան պետք է ունենա։

ՀՍԽՀ-ՍՍՀ

21.319

2. Զուգավորման պլանը կազմելու համար պետք է ճշտությամբ հաշվի առնված լինեն պլանավորման յենթակա տարվա ընթացքում զուգավորման հասակին հասնող բոլոր յերինջները, ինչպես նաև կովերը։

3. Զուգավորման յենթակա մայրերի քանակին համապատասխան արտադրող ցուլերը պետք է ունենալ։ Ցուլերի քանակը սահմանելու համար ղեկավարվում են հետևյալ հաշվով. ձեռնաքաշ զուգավորման դեպքում յուրաքանչյուր 60—80 կովի և յերինջի համար մեկ հասակավոր ցուլ պետք է թողնել, իսկ ազատ զուգավորման դեպքում՝ 30—40 գլխի համար։

Այն ֆերմաները, որոնք 60 գլխից պակաս կով ունեն, անպատճառ պետք է ցուլ ունենան։

4. Նախրի ցեղական կազմը լավացնելու համար անպայմանորեն պետք է լրիվ կերպով մեխանացում կատարել շրջհողբաժնի կողմից առաջադրած կուլտուրական ցեղի արտադրողներով։ Ցեղական ցուլերը պակասելու դեպքում պետք է անպատճառ նրանց ձեռք բերել. վոչ մի դեպքում չի թույլատրվում հողբաժնի կողմից առաջադրված մեխանացման պլանը պակասեցնել։

5. Որացուցային պլանը կազմելուց հետո, վորի մեջ պետք է ցույց տրված լինի, թե վոր կովը կամ յերինջը վոր ամսում և վոր ցուլով պետք է ծածկվի, պետք է կազմել ամբողջ նախրի զուգավորման տարեկան պլանը։

6. Որացուցային պլանը կազմվում է կովերի և յերինջների ծնի սպասելի վերադասավորման համապատասխան։

7. Կովերի ծինը վորոշվում է զուգավորման գրանցումների հիման վրա՝ այս հրահանգի վերջում տրված հղիության որացույցի ոգնությամբ (տես հավելված № 1)։

8. Այն ֆերմաներում, ուր զուգավորման գրանցումներ չեն յեղել, անհրաժեշտ է զուգավորման պլանը կազմելուց առաջ կով կթողներից, տավարապահներից, նախրապահից հարցուփորձով, թեկուզ մոտավոր ճշտությամբ, վորոշել յուրաքանչյուր կովի զուգավորվելու ժամանակը։

9. Հաշվի առնելով զուգավորման յենթակա կովերի և յերինջների սպասարկման համար պահանջվող ցուլերի քանակը, ինչպես նաև գյուղի տերիտորիալ դասավորումը՝ վորոշվում է կազմակերպվող զուգակայանների և նրանց մեջ յեղած ցուլերի քանակը։ Կոլտնտեսականների և մենատնտեսների կովերի սպասարկման համար զուգակայանների կազմակերպման և արտադրողների առանձնացման գործը դրվում է կոլտնտեսության վարչությունների և գյուղխորհուրդների վրա։

10. Զուգավորման պլանները պետք է քննության առնվեն անասնապահական բրիգադի արտադրական խորհրդակցությունում և գյուղխորհրդի անասնապահական սեկցիաներում։ Հաստատումից հետո այդ պլանները պետք է հասցվեն յուրաքանչյուր տավարապահ կով կթողին՝ նրան ամրացրած կովերի համար, յուրաքանչյուր տավարապահին. արոտային շրջանում՝ յուրաքանչյուր նախրապահին, իսկ կոլտնտեսականների և մենատնտեսների հոտի համար՝ յուրաքանչյուր անասնատիրոջը։

11. Զուգավորման ճիշտ կազմակերպման և ամբողջ ֆերմայի զուգավորման պլանի կատարման պատասխանատվությունը դրվում է ֆերմայի վարիչի վրա, կոլտնտեսականների նախրի համար՝ կոլտնտեսության նախագահի վրա, իսկ ամբողջ կոլտնտեսության, կոլտնտեսականների և մենատնտեսների համար՝ գյուղխորհրդի նախագահի վրա։

12. Զուգավորման ցանկություն ունեցող կովերի հայտարերման և ժամանակին նրանց ծածկելու գործում կոլտնտեսականների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով, ԽՍՀՄ ՀԺԿ կողմից 1934 թվի նոյեմբերի 14-ին հաստատված աշխատանքի կանոնադրության համապա-

տասխան, բոլոր ֆերմաններում պետք է գործնականում կիրառել լրացուցիչ աշխորների հատկացում, իսկ յուրաքանչյուր սերջ կովի համար՝ աշխորների յետ պահում։

13. Կոլտնտեսականների և մենատնտեսների կովերի զուգավորման համար սահմանած վարձատրության չափը հողբաժինն է վորոշում, ըստ վորում բնանյութով վարձատրելու դեպքում չպետք է անցնի 4 կգ հացահատիկից, իսկ դրամով՝ 5 ռուբլուց։

14. Հողբաժնի կողմից սահմանված վարձաչափից ավելի վերցնելը կատեգորիկ կերպով արգելվում է։

15. Զուգակայանում ծածկված յուրաքանչյուր կովի համար պետք է զուգավորման վկայական տալ, ուր պետք է ցույց տրված լինի ծածկվելու որը, ցուլի անունը, նրա ցեղը և ցուլատիրոջ անունը։

2. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախրի վորակական կազմը լավացնելու նպատակով, կոլտնտեսային ապրանքային ֆերմաները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն, վորպեսզի նախրում այնպիսի ցուլ ունենան, վոր նրա սերունդն իր կաթնային և մսային հատկություններով մայրերից ավելի բարձր լինի։

2. Զուգավորման համար ընտրած ցուլերը պետք է պատկանեն պլանային ցեղին։ Պլանային ցեղին պատկանող ցուլերի պակասի դեպքում միայն թույլատրվում է ուրիշ ցեղի, նույնպես և բարձր արտադրողականություն ունեցող ծնողներից սերված տեղական ցեղի ցուլերի ողտագործումը։

3. Զուգավորելու համար թույլատրած բոլոր ցուլերի ծագումը պետք է հայտնի լինի (հոր և մոր կենդանի քաշը, մորատատի և հորատատի կիթը և կաթի յուղալի լինելու տոկոսը)։

4. Ցուլի ծագման մասին յեղած տվյալների բացակայության դեպքում պետք է բոլոր միջոցները ձեռք առնել հայտաբերելու այդ տվյալները։ Այդ նպատակի համար՝ այն ֆերմաներում, ուր անասունների մթերատվության հաշվառումը կազմակերպված չի յեղել, պետք է այդ դեպքում ցուլի հորատատի կամ մորատատի կաթնատվության կարճատև (15—10 որյա) ստուգում անցկացնել և հրահանգի վերջում ավելացրած տախտակի (տես հավելում № 2) ոգնությամբ վորոշել ստուգման յենթակա անասունի մոտավոր կիթը։

5. Զուգավորելու թույլատրած ցուլերն անհրաժեշտ է բաժանել 3 խմբի.

ա) ցուլեր, վորոնք գրանցվել են Պետական տոհմային գրքում (Պ.Տ.Գ.).

բ) ցուլեր, վորոնք գրանցվել են շրջանային տոհմային գրքում (Շ.Տ.Գ.).

գ) ժամանակավորապես զուգավորելու թույլատրած վոչ պլանային ցեղին պատկանող տեղական և զանազան արենուսնակության խառնուրդ (մետիս) ցուլեր։

6. Ժամանակավորապես զուգավորելու համար թույլատրած ցուլերը, վորքան կարելի յե, շուտ պետք է փոխարինվեն։

7. Ցուլերը խմբերի բաժանելուն զուգընթաց, ըստ իրենց արտադրողականության պետք է խմբերի բաշխել նաև զուգավորման յենթակա բոլոր կովերին, վորպեսզի իրենց արտադրողականությամբ լավագույն կովերն ամրացվեն ծագումով լավագույն արտադրողներին։

3. ՑՈՒԼԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ցուլին պետք է այնպես կերակրել, վոր նա միշտ միջին գիրություն ունենա. չպետք է այնպես անել, վոր նա լղարի կամ ճարպակալի։

2. Զուգավորման շրջանում արտադրողներին պետք է

ավելի առատ կերակրել։ Թույլ աշխատանքի շրջանում կերակրումը պետք է չափավոր լինի։

3. Արտադրողների որական կերաբաժինները պետք է կազմել հետևյալ նորմաներով.

Ցուլի կենդանի քաշը (կիլոգրամներով)	Վոչ զուգավորման շրջանում		Զուգավորման շրջանում			
			Թույլ բեռնվածություն ունենալու դեպքում		Միջին բեռնվածություն ունենալու դեպքում	
	Կերի միավոր	Սպիտակուց գրամներով	Կերի միավոր	Սպիտակուց գրամներով	Կերի միավոր	Սպիտակուց գրամներով
300	4,3	290	5,3	390	6,3	490
350	4,7	310	5,7	410	6,7	510
400	5,0	330	6,0	430	7,0	530
450	5,3	340	6,3	440	7,3	540
500	5,6	360	6,6	460	7,6	560
550	5,9	380	6,9	480	7,9	580
600	6,1	390	7,1	490	8,1	590
650	6,4	410	7,4	510	8,4	610
700	6,6	420	7,6	520	8,6	620
750	6,6	440	7,9	540	8,9	640
800	7,1	450	8,1	550	9,1	650

Ծանոթություն.— ա. Աճող յերիտասարդ, ինչպես նաև հյուծված ցուլերի համար վերոհիշյալ նորմաներին պետք է ավելացնել մեկ կիլոգրամ կերի միավոր և 100 գրամ սպիտակուց։

բ. Շարունակ պետք է հետևել, վոր ցուլը վոչ լղարի և վոչ ել ճարպակալի։

Որինակելի կերաբաժիններ՝ զուգավորման և վոչ զուգավորման շրջանների համար (կիլոգրամներով)։

Ցուլի կենդանի քաշը (կիլոգրամներով)	Զուգավորման շրջանում						Զուգավորման շրջանում միջին բեռնվածություն ունենալիս					
	Տրվում է յուրաքանչյուր որ						Տրվում է յուրաքանչյուր որ					
	Կերի միավոր	Սպիտակուց գրամներով	Մարգագետնային խոտ	Կարտոֆել	Արմատապտուղ	Սիլոս	Կերի միավոր	Սպիտակուց գրամներով	Մարգագետնային խոտ	Կարտոֆել	Արմատապտուղ	Սիլոս
300	4,3	0,29	6,0	1,5	—	2,0	6,3	0,49	6,0	3,0	0,3	2,0
400	5,0	0,33	7,0	1,6	—	2,5	7,0	0,53	7,0	3,2	0,4	2,5
500	5,6	0,36	8,0	1,7	—	3,0	7,6	0,56	7,5	3,4	0,3	3,5
600	6,1	0,39	9,0	1,7	—	3,5	8,1	0,59	8,0	3,6	0,3	4,0
700	6,6	0,42	9,5	1,9	1	3,5	8,6	0,62	8,5	3,8	0,4	4,0
800	7,1	0,45	10,0	2,0	2	4,0	9,1	0,65	9,0	4,0	0,4	4,5

Ցուլերի համար կերաբաժիններ կազմելու որինակներ.

որինակ 1-ին.— ունենք 430 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող ցուլ և պահանջվում է զուգավորման շրջանի համար կերաբաժին կազմել։

Վերևում տրված տախտակից յերևում է, վոր նրան որական պիտի տալ 7 կերի միավոր և 0,53 կգ սպիտակուց։

Կերի բաժինը կազմում ենք տնտեսության մեջ յեղած կերերից.

7,0	կգ	մարգագետ. խոտ	—3,2	կերի միավոր	և 0,29	կգ	սպիտակուց
3,2	»	վարսակ	—3,2	»	» 0,24	»	»
0,4	»	թեփ	—0,3	»	» 0,04	»	»
2,5	»	արմատապտուղ	—0,3	»	» 0,023	»	»
		Ընդամենը	—7,00	»	» 0,59	»	»

որինակ 2-րդ.— Ունենք 600 կգ կենդանի քաշ ունեցող ցուլ, վորի համար վոչ զուգավորման շրջանի կերաբաժին պետք է կազմել։ Մեկ որվա համար պահանջվում է 6,1 կգ կերի միավոր և 0,39 կգ սպիտակուց։

Կերաբաժինը կազմում ենք տնտեսության մեջ յեղած կերերից.

9,0 կգ մարգագետ. միջին վորակի խոտ	3,8 կերի միավոր	և	0,27 կգ սպիտակուց
1,7 » վարսակ	1,7 »	»	0,18 »	»
3,5 » սիլոս	0,6 »	»	0,03 »	»
Ընդամենը	6,1 »	»	0,43 »	»

4. Լավորակ խոտը և վարսակը ցուլի համար լավագույն կեր են։

5. Ուժեղ կերից, բացի վարսակից, ցուլերին կարելի է տալ գարի, սիսեռ, թեփ (քիչ քանակությամբ՝ 0,5—1 կգ) և յեգիպտացորեն։ Վարսակը, գարին և յեգիպտացորենն ավելի լավ է մանրացրած դրությամբ տալ, իսկ սիսեռը՝ ալյուր վիճակում։

6. Մեծ քանակությամբ սիլոս և ժոմ տալը չի թույլատրվում։

7. Քիչ քանակությամբ արմատապտուղներ, մանավանդ գազար տալը ցուլերի համար շատ ոգտակար է։

8. Բոլոր կերը պետք է լավ վորակի լինի։ Ցուլերին փչացած կեր տալ չի կարելի։

9. Ցերիտասարդ ցուլերի կերաբաժնին ամեն որ հանքային աղեր (սեղանի աղ, կավիճ, վոսկրի ալյուր) պետք է ավելացնել։ Սեղանի աղ և կավիճ (ալյուր դարձրած) որական պետք է տալ 10 գրամ, իսկ վոսկրի ալյուր՝ յուրաքանչյուր 100 կգ կենդանի քաշին 5—6 գրամ։

Հասակավոր ցուլերին սեղանի աղը մեծ կտորներով պետք է տալ, այն դնելով նրա առաջը, վոր լիզի՝ վորքան և յերբ ինքը ցանկանա։

10. Ցուլերին պետք է կերակրել, համաձայն խիստ կերակրով սահմանած ներքին կարգ ու կանոնի, որվա նույն ժամերին։ Կոպիտ կերը (խոտ և դարման) ցուլերին որական 3 անգամ պետք է տալ—առավոտյան՝ խտացրած և հյութալի կերերն ուտելուց և ջրելուց հետո, կեսորին՝ զրոսանքից ու ֆիզիկական աշխատանքից հետո և յերեկոյան՝ նույնպես ուժեղ և հյութալի կերերն ուտելուց հետո։

Ուժեղ և հյութալի կերերն որական 2 անգամ պետք է տալ՝ առավոտյան և յերեկոյան։

11. Ցուլերին պետք է ջրել ձմեռն որական 2 անգամ, ամառնը՝ 3—4 անգամ։ Խմելու ջուրը պետք է լավորակ, թարմ և վոչ սառը լինի (8—10°Ց)։

12. Պաղ—սառցային ջրով ցուլերին չի կարելի ջրել, ինչպես նաև չի կարելի ջրելու համար ձմեռը գետը կամ առվակը տանել։

13. Ցուլերին պետք է ջրել կոպիտ կերերը տալուց և աշխատանքից առաջ. աշխատանքից անմիջապես հետո ջրելն արգելվում է։

14. Ձմեռը ջրելու համար յուրաքանչյուր ցուլին առանձին դույլ պետք է ունենալ։ Մի դույլից մի քանի ցուլ ջրելով կարելի է վարակիչ հիվանդություններ փոխանցել։

15. Մսուրները, ջրելու դույլերը և մյուս իրերը միշտ պետք է մաքուր դրությամբ պահել։

16. Արտադրողներն ամառն արոտատեղով անպայման ապահովված պետք է լինեն։ Յուրաքանչյուր ֆերմա ցուլերն արածեցնելու համար հատուկ արոտատեղ պետք է ունենա, վորը պետք է լավ արոտ ունենա և ֆերմային մոտիկ լինի։

17. Ցուլերի համար առանձնացրած արոտատեղը պետք է քարերից, թփուտներից, ծառերի ընձերից և թփերից (քյոլերից) մաքրված լինի։

18. Ցուլերին պետք է արածեցնել նորոգած կամ ցանկապատած հողակտորի վրա։ Ցուլերի կապի (հորուգի) համար կարելի է ոգտագործել բարակ շղթա կամ ամուր թոկ, վորը գետնին ենք ամրացնում այդ նպատակի համար ամուր փայտից կամ յերկաթից պատրաստած հատուկ ցցով։

19. Ցուլերին կապած արածեցնելիս որական 2—3 ան-

գամ, նայած արոտի վորակին, արածելու տեղը պետք է փոփոխել։

20. Հիվանդանալուց և մարսողության որգանների խանգարումից խուսափելու համար, մսուրային կերակրումը պետք է անցնել աստիճանաբար։

21. Արածելու առաջին 5—10 որը ցուլերին պետք է վորոշ չափով չոր խոտ տալ։

22. Ամառը ցուլերին արոտից վերադարձնելիս, զուգավորման աշխատանքից հետո՝ ցերեկը և յերեկոյան պետք է թարմ, նոր հնձած կանաչ խոտ և լրացուցիչ խտացրած կեր տալ։

23. Խիստ շոգ որերին ցուլերին որական յերկու անգամ արոտի պետք է հանել՝ մեկ առավոտյան և մեկ ել յերեկոյան կողմը, յերբ շոգը մեղմանում է։

4. ՑՈՒԼԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Ցուլերին պետք է պահել կովերի հետ ընդհանուր գոմում, սակայն հատկապես նրանց համար հարմարեցրած և պատրաստած տավրատեղում։ Տավրատեղի յերկարությունը պետք է համապատասխանի ցուլի յերկարությանը. միջին հաշվով տավրատեղը պետք է 1,8—2 մետր յերկարություն և 1,25—1,5 մետր ել լայնություն ունենա։

2. Ցուլանոցը չոր, մաքուր և լուսավոր պետք է լինի։ Վոչ մի դեպքում չի կարելի ցուլերին խոնավ, մութ և կեղտոտ շենքում պահել։

3. Ցուլանոցը պետք է մսուր և տավարակապ ունենա։ Ցուլի գլխավերևը պետք է փոքր տախտակ ունենալ, վորի վրա գրված լինի ցուլի անունը, համարը, ծնվելու ժամանակը, կենդանի քաշը և ծագումը (մոր և հոր կաթնատվությունը, յուղի տոկոսը կաթի մեջ)։

4. Ցուլերին ամեն որ խոզանակով պետք է մաքրել, իսկ աղտոտած տեղերը ջրով լվանալ։

Ցուլ մաքրելու իրերը (խոզանակը, քերոցը, լաթերը) պետք է ամրացված լինեն յուրաքանչյուր ցուլին առանձին, քանի վոր այդ իրերը շատ հեշտությամբ մեկ անասունից մյուսին են փոխանցում զանազան հիվանդություններ և միջատներ։

5. Վորպեսզի ցուլերը միմյանց չխփեն և չվիրավորեն, ինչպես նաև սպասարկող անձին չվնասեն, անպատճառ պետք է կտրել յեղջյուրների սուր ծայրերը վոչ ավելի 1,5—2 սմ յերկարությամբ։

6. Ցուլի կճղակները պետք է կտրել, նայած թե նրանք վորքան են յերկարել (տարին 2—3 անգամ)։ Բացի կտրելուց, անհրաժեշտ է պարբերաբար ստուգել կճղակների մաքրությունը և նրանց մաքրել գոմաղբից ու կեղտից։

7. Ե՛լ ավելի մաքրություն պահպանելու նպատակով, անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ ցուլի պոչի ծայրի մազերը, պոչի ծայրից 8—10 սմ յերկարությամբ՝ խուզել։

8. Բացի պոչից, պետք է կտրել նաև ցուլի պորտի վրա յեղած մազերը, քանի վոր այդ մազերն ուժեղ կերպով կեղտոտվում են, կովի վրա բարձրանալիս խանգարում են և առնանդամի հիվանդություն են առաջ բերում։

9. Ցուլի հետ պետք է մեղմ վարվել, վճռական, սակայն վոչ կոպիտ։ Չպետք է նրան չարացնել և վոչ ել գոռալ նրա վրա, չպետք է քացով խփել կամ փայտով հարվածել։ Հարատև վճռական և վստահ վերաբերմունքով ցուլին պիտի սովորեցնես քեզ յենթարկվելու և լսելու։ Ամեն անգամ ցուլին մոտենալիս միշտ պետք է հիշել, վոր ցուլին վստահել չի կարելի։

10. Ցուլի հետ ավելի դյուրին վերաբերմունք ունենալու նպատակով, անհրաժեշտ է նրա քթին, մանավանդ չար ցուլերի, ողղնել։

Քթի ողը հատուկ գործիքի՝ ֆլյոսի ունելիքի միջոցով հագցնում են ցուլի քթի միջնապատի փափուկ մսի մեջ,

վորը կատարում է անասնաբուժը, զոոտեխնիկը, կամ տեխնիկ-անասնապահը։

11. Վորպեսզի կեր ուտելու միջոցին ողը ցուլին չխանգարի կամ չկպչի ուրիշ իրերի, հատուկ թոկով դեպի վեր թեքելով՝ ողը թոկով կապում են յեղջյուրների մեջտեղը՝ ցուլի ճակատին։

12. Ցուլի համար շատ կարևոր նշանակություն ունի ֆիզիկական աշխատանքը և զբոսանքը։ Ցուլին, բացի անձրևային, վատ յեղանակներից կամ ձմեռվա բուք որերից, ամեն որ պետք է զբոսանքի հանել։

13. Ձմեռը ցուլի զբոսանքի համար գոմին մոտիկ ցանկապատած զբոսավայր պետք է պատրաստել։

14. Ձմեռը ցուլերին զբոսանքի պետք է թողնել մաքրելու և կեսորին կերակրելու միջև ընկած ժամանակամիջոցում, այսինքն՝ ցերեկվա ժամի 10-ից մինչև 12-ը։

15. Զբոսանքը պետք է տրվի որը 2—4 ժամ, ցուրտ ու պարզկա որերին, յերբ ողի ջերմաստիճանը մինուս 30° և ավելի յե, ըստ Ցելսիուսի՝ 1—2 ժամ։

Զբոսանքի համար ցուլին ցանկապատած զբոսավայր տանելիս չպետք է կապել. ընդհակառակը, նրա շարժումներին լիակատար ազատություն պետք է տալ։

16. Ֆիզիկական թեթև աշխատանք լծած դրությամբ պետք է կատարել տալ ամեն որ, կամ յերկու որը մի անգամ, յուրաքանչյուր անգամին վոչ պակաս 2—4 ժամ տևողությամբ։ Յեթե աշխատանքը 4 ժամ է տևում, այդ դեպքում պետք է այն կատարել տալ 2 անգամ՝ առավոտյան մաքրելուց հետո և յերեկոյան։ Արգելվում է ցուլին աշխատանքով ծանրաբեռնելը։ Որվա շոգ ժամանակ (ամռան) ցուլերին չպետք է աշխատեցնել. լավ կլինի այդ աշխատանքը կատարել վաղ առավոտյան, կամ յերեկոյան։

17. Ցուլերին աշխատանքի պետք է սովորեցնել 1 տ. 3 ամսականից մինչև 1 տ. 6 ամսական հասակում։ Սկզբում սովորեցնում են քաշելով գնալուն, ապա լծին են վարժեցնում և դրանից հետո՝ լծված գնալուն և ծանրություններ քաշելուն (յերիտասարդ ցուլերի համար 60—80 կգ, հասակավորների համար՝ 150—180 կգ)։

18. Ցուլերին կարելի յե աշխատեցնել միայնակ լծած՝ լծելով նրան մեկ ցուլի համար հարմարեցրած լծով, նաև զույգ լծած։ Նրանց կարելի յե ոգտագործել ջուր բերելու, խոտը գոմին մոտեցնելու, փայտ բերելու, գոմաղբը դուրս տանելու, կաթը փոխադրելու և այլ աշխատանքների համար։

19. Ցուլերին պետք է աշխատեցնել դանդաղ քշելով և յերբեք չպետք է վազեցնել։ Կարուկ կերպով արգելվում է աշխատանքի միջոցին ցուլին զոր տալը կամ հարվածելը։

20. Ցուրաքանչյուր ցուլի կամ զույգի համար հատուկ լծասարք պետք է ունենալ, վորը պետք է խնամքով պատրաստված և հարմարեցրած լինի։ Անհարմար լծասարքը ծեղա վի հարվածք է առաջ բերում։

5. ՅՈՒԼԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

(Զուգավորման տեխնիկան)

1. Առաջին անգամ ցուլերին և յերինջներին զուգավորման պետք է թողնել հետևյալ հասակում.

ա) շվեց և սիմենտալ ցեղի յերինջներին՝	16—18	ամս.	ցուլիկներին՝	13—15	ամս.
բ) կովկասյան տեղական ցեղի	„ 18—22	„	„	15—18	„
գ) գոմեշներին՝	„ 30—36	„	„	26—30	„

Ծանոթություն.—Յերինջներին զուգավորման թողնելիս, յուրաքանչյուր առանձին դեպքում, բացի հասակից, հաշվի պետք է առնել նաև նրա ընդհանուր զարգացումը։ Առաջին անգամ յերինջին զուգավորման պետք է թողնել այն ժամանակ, յերբ նրա կենդանի քաշը հասել է նորմալ կովի կենդանի քաշի 65—70%-ին (այսինքն՝ $^2/_3$ մասին)։

2. Յերիտասարդ ցուլերին զուգավորման թողնելիս նրանց պետք է նորմալ հասակ առած ցուլի բեռնվածության կիսի չափով կովեր տրամադրել։

3. Հատուկ ուշադրություն պիտի դարձնել կովերի ցուլերի գալու ցանկության հայտաբերմանը։ Ցանկություն ունեցող կովի հայտաբերումը ֆերմայի աշխատողների, հատկապես կթող-տավարապահների և նախրապահների ամենապատասխանատու խնդիրը պետք է լինի։

Այն անձինք, որոնք իր ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք չեն առնում ցանկություն ունեցող կովերին ցուլով ծածկելու, նրանք, որպես նախրի վերարտադրման խանգարողներ, խիստ պատասխանատվության պետք է կանչվեն։

4. Կովերի ցուլի գալու ցանկությունը սովորաբար ծնելուց 16—28 որից հետո յե հանդես գալիս։ Յեթե առաջին ցանկության միջոցին կովը չի ծածկվել կամ բեղմնավորվել, այդ դեպքում նրա ցանկությունը կրկին անգամ հանդես է գալիս 16—28 որից հետո։

5. Ամառ ժամանակ, յերբ կովերն որվա մեծ մասն ազատ են ու արոտատեղում, նրանց ցուլի գալու ցանկությունն ավելի ուժեղ է արտահայտվում քան ձմեռը, յերբ նրանք գոմում կապված են լինում։

6. Կովի ցուլի գալու ցանկության առաջին նշանը նրա անհանգիստ լինելն է։ Այդպիսի կովը, յեթե նա մսուրային շրջանում է և գոմում կապած, հաճախ պոչը պտտում, բառաչում է, կողքի կովերին լիզում է, մեջքը կորացնում և պոչի հիմքը վեր է բարձրացնում։

7. Յերբ ցուլի գալու ցանկությունն արոտային շրջանում է, այդպիսի կովը դադարում է արածելուց, մյուս կովերի շուրջը պտույտ է գալիս, ցատկում է նրանց վրա, կամ մյուս կովերն են նրա վրա ցատկում, իսկ նա հանգիստ կանգնում է այդ ժամանակ։

8. Արտաքին սեռական որգանները ցանկություն ունենալու միջոցին մի փոքր ուռչում են և կարմրում (շատ հաճախ լորձունք է ծորում), հեշտոցի լորձաթաղանթը նույնպես վորոշ չափով կարմրում է։

9. Կովերը պետք է ծածկվեն առաջին ցանկության կամ յերկրորդի միջոցին, համենայն դեպս վոչ ուշ յերրորդից։ Ցանկալի յե, վոր զուգավորումը կատարվի ցանկության ժամանակամիջոցի կեսին, վորը նրանց մոտ 6-ից մինչև 36 ժամ է տեվում։

10. Յերբ կովերը մանր են, իսկ ցուլերը խոշոր և ծանր, վորպեսզի ցուլի ծածկելու միջոցին կովերը չվնասվեն, պետք է հատուկ զուգավորման դաղդյահներ պատրաստել (տես հավելված № 3)։

11. Զուգավորումը, վորպես որենք, պետք է ձեռնաքաշ լինի։ Սակայն այն ֆերմաներում, ուր տեղական պայմաններից յելնելով ձեռնաքաշ զուգավորում անցկացնելը կապված է մեծ դժվարությունների հետ (անտառային և լեռնային արոտներ ունենալը, վորոնք դժվարացնում են ժամանակին կովի ցուլի գալու ցանկությունը հայտաբերելը և ժամանակին ել զուգակայան հասցնելը), թույլ է տրվում ազատ զուգավորում կիրառել։

12. Ազատ զուգավորում կիրառելու դեպքում, ամբողջ արոտային շրջանի տևողության ընթացքում, շաբաթը մեկ որ ցուլին պետք է հանգիստ տալ, քանի վոր ազատ զուգավորման միջոցին, չափից դուրս շատ ցատկումների հետևանքով, ցուլը հյուծվում է։ Վոչ մի դեպքում չի թույլատրվում հանգիստ տալու ժամանակ նախրում յեղած բոլոր ցուլերը մի անգամից նախրից հանել. պետք է հերթով, որը մեկ ցուլի հանգիստ տալ։

13. Արհեստական սերմանում թույլատրվում է անցկացնել բացառապես այն ֆերմաներում, վորոնք ավելի կազմակերպված են [illegible] անցկացնելու համար նախա-

ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մեսրոպի անվան

պատրաստված են, ունեն կայանի կահավորում և սերմանման այդ ձևը յուրացրած կադրեր։

14. Ֆերմաներում արհեստական սերմանման կիրառումը թույլատրվում է բացառապես հողային վարչությունների թույլտվությամբ (կայանների կազմակերպման կանոնները և սերմանման տեխնիկան ցույց են տրված ՀԺԿ-ի կողմից հաստատված՝ կոլտնտեսություններում և խորհնտեսություններում խոշոր յեղջերավոր անասունների արհեստական սերմանման մասին յեղած հրահանգի մեջ)։

15. Անհրաժեշտ է, նախքան զուգավորումը, ցուլի յեկող կովի հետին մասը, պոչի հիմքը և արտաքին սեռական որգանները գոլ ջրով լվանալ։

16. Ցուլին կովի մոտ են թողնում թոկից բռնած։ Կովի ցանկության որը ցուլի մեկ անգամ ցատկելը բավական է, վորպեսզի կովը բեղմնավորվի։ Մեկ ցուլին որական յերկու անգամ զուգավորելու թողնելը թույլատրելի յե միայն այն դեպքում, յերբ ցանկություն ունեցող կովերի թիվը շատ է։ Այդ դեպքում ցուլին պետք է թողնել մեկ առավոտյան և մեկ անգամ ել յերեկոյան կողմը։

Լարված աշխատանքի դեպքում, յուրաքանչյուր 5—6 որից հետո, ցուլին պետք է մեկ որ հանգիստ տալ։

17. Ծածկելուց հետո կովին գոմը կամ աղն են տանում, իսկ ցուլին հանգիստ տալու նպատակով մի քիչ ման են տալիս։

18. Ծածկված կովին 3 ամիս շարունակ պետք է հետամուտ լինել՝ պարզելու, թե նա բեղմնավորված է, թե վոչ։

6. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Նախքան զուգավորման կամպանիայի սկսվելը բոլոր արտադրող ցուլերն ու կովերը պետք է անասնաբուժի կողմից քննության յենթարկվեն։ Բացի դրանից, պետք է ստուգվի արտադրողների սերմի վորակը։

2. Ցուրաքանչյուր կով, նախ քան ծածկվելը, պետք է զոոպերսոնալի կողմից նայվի, վորից հետո միայն թույլատրվում է ծածկվելու։

Այն դեպքում, յերբ հիվանդության կասկածներ կան կամ կովի սեռական որգանների բնագավառում հիվանդության յերևույթներ են նկատվում, չի թույլատրվում այդպիսի կովին ծածկվելու թողնել. նրան պետք է անմիջապես զատել առողջ կովերից և այդ մասին հաղորդել կոլտնտեսության վարչության՝ անասնաբուժ կամ անասնաբուժական կանչելու համար։

3. Բոլոր արտադրող-ցուլերը զոովետերսոնալի անմիջական հսկողության տակ պետք է գտնվեն և զուգավորման կամպանիայի ընթացքում, վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ, անասնաբուժական քննության յենթարկվեն։

4. Առանձին հիվանդությունների նկատմամբ վոչ բարենպաստ պայմաններ ունեցող տնտեսությունների համար զուգավորման կամպանիայի անցկացման և ցուլերի ոգտագործման հետևյալ կարգն է սահմանվում։

I. ԲՐՈՒՑԵԼՅՈԶԻ (ՎԱՐԱԿԻԶ ՎԻԺՈՒՄ) ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Այն արտադրողներին, վոր բացահայտ կերպով հիվանդ են բրուցելյոզով (վորոնք բրուցելյոզի կլինիկական նշաններ ունեն) չի թույլատրվում մասնակցելու զուգավորման աշխատանքներին.

բ) այն արտադրողներին, վորոնց զննումը բրուցելյոզի համար դրական արդյունքներ է տվել (առանց կլինիկական նշանների), թույլատրվում է աշխատել միայն դրական արդյունքներ հայտաբերած կովերի խմբում.

գ) վիժած կովերին թույլ է տրվում զուգավորել վիժելուց հետո 2 ամսից վոչ շուտ և յերբ բոլորովին դադարել են սեռական որգանների անցքերից յեղած արտաթորումները.

դ) կովերի յուրաքանչյուր առանձին խմբի համար առանձին արտադրող պետք է առանձնացնել։

Չի թույլատրվում, վորպեսզի միևնույն ցուլը և՛ առողջ, և՛ հիվանդ կովերին սպասարկի,

II. ԹՈՔԱԽՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Այն կովերը, վորոնց գննումը թոքախտի համար դրական արդյունք է տվել, վորոնց մոտ սակայն թոքախտի կլինիկական նշանները բացակայում են, պետք է չեզոքացված խմբով առանձին պահվեն և նրանց համար առանձին ցուլ պետք է հատկացվի։

7. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Զուգավորման ստուգման և նրա ընթացքին հետևելու համար անհրաժեշտ է զուգավորման մանրակրկիտ հաշվառում կատարել։ Զուգավորման հաշվառումը (գրանցումը) պետք է կատարվի զուգավորման մատյանում հենց զուգավորման օրը (տես հավելված № 4), վորպիսին պետք է ունենալ յուրաքանչյուր կոլտնտեսությունում և գյուղխորհրդում։

2. Կոլտնտեսությունների նախրի և զուգավորման հաշվառումը բրիգադիրն է տանում, իսկ կոլտնտեսականներինը և մենատնտեսներինը՝ զուգավորում տանող անձը, վորը պարտավոր է յուրաքանչյուր տասնորյակում բոլոր ծածկված անասունների մասին գյուղխորհրդին տեղեկություն ներկայացնել։

Այն կոլտնտեսություններում, ուր արոտային շրջանում ազատ զուգավորում է կիրառվում, զուգավորման հաշվառումը նախրապահն է տանում։ Նախրապահը պարտավոր է որվա վերջին կոլտնտեսության նախրում որվա ընթացքում ծածկված անասունների մասին զեկուցել, իսկ կոլտնտեսականների և մենատնտեսների հոտի համար, յուրաքանչյուր տասնորյակում, գյուղխորհրդին ծածկված անասունների մասին տեղեկություն ներկայացնել։

3. Տոհմային ֆերմաներում ցուլերի զուգավորելը պետք է գրանցվի նաև ցուլի գործարանային քարտում անձնագրում։

4. Գյուղխորհուրդը պարտավոր է յուրաքանչյուր տասնորյակում (ամսի 2-ին, 12-ին և 22-ին), գ/խ. հաշվետվության № 13 ձևով, հաշվետվություն ներկայացնել շրջհողբաժնին։

ՀՂԻՈՒԹՅԱՆ ՈՐԱՑՈՒՅՑ

Հավելված № 1

Բեղմնավորման օրը	Ծնի օրը	Բեղմնավորման օրը	Ծնի օրը	Բեղմնավորման օրը	Ծնի օրը	Բեղմնավորման օրը	Ծնի օրը
Հունվար	Հոկտեմբեր	Փետրվար	Նոյեմբեր	Մարտ	Դեկտեմբեր	Ապրիլ	Հունվար
1	7	1	7	1	5	1	5
5	11	5	11	5	9	5	9
10	16	10	16	10	14	10	14
15	21	15	21	15	19	15	19
20	26	20	26	20	24	20	24
25	31	25	1 դեկտեմ.	25	29	25	29

Մայիս	Փետրվար	Հունիս	Մարտ	Հուլիս	Ապրիլ	Օգոստոս	Մայիս
1	4	1	7	1	6	1	7
5	8	5	11	5	10	5	11
10	14	10	16	10	15	10	16
15	18	15	21	15	20	15	21
20	23	20	26	20	25	20	26
25	28	25	31	25	30	25	31

Սեպտեմբեր	Հունիս	Հոկտեմբեր	Հուլիս	Նոյեմբեր	Օգոստոս	Դեկտեմբեր	Սեպտեմ.
1	7	1	7	1	7	1	6
5	11	5	11	5	11	5	10
10	16	10	16	10	16	10	15
15	21	15	21	15	21	15	20
20	26	20	26	20	26	20	25
25	1 հուլիսի	25	31	25	31	25	30

Հավելված № 2

Տախտակ՝ կաթնատվության շրջանի (լակտացիայի) 300 որվա ընթացքում մոտավոր կաթնատվության վորոշման համար՝ ըստ կաթնատվության տասնորյա ստուգման ժամանակամիջոցի միջին որական կիթի.

Կաթնատվության շրջանի ամիսը					Կաթնատվությունը 300 որվա համար
1	2	3	4	5	
Որական կիթը, ըստ լակտացիայի ամիսների					
4,0	3,7	3,5	3,1	2,8	720
4,5	4,2	3,9	3,5	3,2	820
5,0	4,7	4,3	3,9	3,5	930
5,5	5,1	4,8	4,4	3,9	1040
6,0	5,6	5,2	4,7	4,3	1150
6,5	6,0	5,7	5,2	4,7	1250
7,0	6,5	6,1	5,6	5,1	1370
7,5	7,0	6,5	5,9	5,4	1480
8,0	7,5	7,0	6,4	5,8	1600
8,5	7,9	7,4	6,8	6,2	1710
9,0	8,4	7,8	7,2	6,6	1820
9,5	8,8	8,3	7,6	6,9	1930
10,0	9,3	8,7	8,0	7,3	2040
10,5	9,8	9,1	8,4	7,7	2150
11,0	10,2	9,6	8,8	8,1	2260
11,5	10,7	10,0	9,2	8,5	2370
12,0	11,2	10,4	9,6	8,9	2480
12,5	11,7	10,9	10,0	9,2	2590
13,0	12,1	11,3	10,4	9,5	2700
13,5	12,6	11,7	10,8	9,9	2810
14,0	13,0	12,2	11,2	10,3	2920
14,5	13,5	12,6	11,6	10,7	3030
15,0	14,0	13,1	12,1	11,1	3150
15,5	14,4	13,5	12,5	11,4	3260
16,0	14,9	13,9	12,9	11,8	3370
17,0	15,8	14,8	13,7	12,6	3580
18,0	16,7	15,7	14,5	13,3	3810
19,0	17,7	16,5	15,3	14,1	4080
20,0	18,6	17,4	16,1	14,8	4250

Հավելված № 2 (շարունակություն)

Տախտակ՝ կաթնատվության շրջանի 300 որվա ընթացքում կաթի յուղալիության մոտավոր %-ի վորոշման համար՝ ըստ կաթնատվության տասնորյա ստուգման ժամանակամիջոցի յուղալիության միջին %-ի.

Կաթնատվության շրջանի ամիսը					Յուղալիության միջին %-ը կաթնատվության շրջանի 300 որվա ընթացքում
1	2	3	4	5	
3,3	3,3	3,3	3,4	3,5	3,5
3,4	3,4	3,4	3,5	3,6	3,6
3,5	3,4	3,5	3,6	3,7	3,7
3,6	3,5	3,6	3,7	3,8	3,8
3,7	3,6	3,7	3,8	3,9	3,9
3,8	3,7	3,8	3,8	4,0	4,0
3,9	3,8	3,9	3,9	4,1	4,1
4,0	3,9	4,0	4,0	4,2	4,2
4,1	4,0	4,1	4,1	4,3	4,3
4,2	4,1	4,2	4,2	4,4	4,4
4,3	4,2	4,2	4,3	4,5	4,5
4,3	4,2	4,3	4,4	4,6	4,6
4,4	4,3	4,4	4,5	4,7	4,7
4,5	4,4	4,5	4,6	4,8	4,8
4,6	4,5	4,6	4,7	4,9	4,9
4,7	4,6	4,7	4,8	5,0	5,0





Զուգավորման դաղդյան (չափերը սանտիմետրերով)

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ՍՍՀ
Им. А. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Կոմերի հաշվառման վիճակագրական քարտ

№	Գյուղ և գավառ	Հանգամանքներ	Զուգավորման դաղդյան	Ամուսնանալու տարիքը	Ամուսնանալու ձևը — որը	Կիթեր տեսակցելու որը	Փաստացի ձեռնարկ որը	Դերը			Ընտանիքի			Ամիսներ			Հավելված
								Արու	Էգ	Ընտանիք	Արու	Էգ	Ընտանիք	Արու	Էգ	Ընտանիք	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
№ գյուղ կարգի	Ընտրել և № գյուղ գրանցողություն	Տարբեր	Դիկտատորի միջոցով	Դիմելն ամուսնանալու որը	Դիմում և գրանցում	Ցորի ատուրը և նրա №	Ցորի տեսակը և նրա №	1	2	3	Դատարան և ձեր — որը	Կիթեր տեսակցելու որը	Փաստացի ձեռնարկ որը	Արու հոգի	Էգ հոգի	Հոգիների միջոցով	Ընդհանրապես հոգիների քանակ

Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Լեզվ. խմբագիր՝ Սրբ. Գրիգորյան

Հրատ. 246, Գլավլիտի լիցեզիա Գ—123, պատվեր 466, տիրաժ 2000
Հանձնվել է արտադրության 1935 թ. հուլիսի 11-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. օգոստոսի 11-ին

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան
NL0301166

21.319

ЭГЬ

НАРОДНЫЙ КОМИССАРИАТ ЗЕМЛЕДЕЛИЯ С С Р А
ЖИВОТНОВОДЧЕСКОЕ УПРАВЛЕНИЕ

ИНСТРУКЦИЯ

по организации и проведению случки крупного рогатого скота

СЕЛЬХОЗГИЗ 1935 ЭРИВАНЬ